

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

**ԶԵՌՔԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

Տիգրան ԽԱԶԻԿՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
3-րդ կուրսի ուսանող*

Յայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, ի թիվս սեփականության իրավունքի առաջացման այլ հիմքերի, մատնանշում է ձեռքբերման վաղեմություն ինստիտուտը: Պետք է նշել, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտին վերաբերող մի շարք հարցեր քաղաքացիական իրավունքի տեսության մեջ դեռևս միանշանակորեն չեն ընկալվում և վերջնական լուծում չեն ստացել:

Մինչև քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածին անդրադառնալը նպատակահարմար ենք համարում նախ անդրադարձ կատարել այս հետաքրքիր ինստիտուտի նախապատմությանը՝ հարցն առավել հանգամանորեն քննարկելով աշխարհի մի շարք երկրների քաղաքացիական օրենսդրության հիմքը հանդիսացող հռոմեական մասնավոր իրավունքում:

Հռոմեական մասնավոր իրավունքում, ինչպես և մեր քաղաքացիական օրենսգրքում տարբերակում էին սեփականության իրավունքի ձեռքբերման եղանակների 2 խումբ՝ սկզբնական և ածանցյալ:

Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակի դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք էր բերվում առաջին անգամ կան նախկին սեփականատիրոջ իրավունքից անկախ: Ածանցյալ եղանակի դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք էր բերվում նախկին սեփականատիրոջ կամքով՝ իբրև հիմք ընդունելով նախորդ սեփականատիրոջ իրավունքը: Ածանցյալ եղանակները կապված էին ինչ-

պես միակողմանի կամային ակտերի (օր՝ կտակի միջոցով սեփականատիրոջ մահից հետո նրան պատկանող գույքը ժառանգաբար փոխանցվում էր կտակի մեջ նշված անձին), այնպես էլ երկկողմանի կամային ակտերի հետ (օր. առուծախի և նվիրատվության պայմանագրերը)¹:

Ըստ որում, վերը հիշատակված դասակարգումը իր հիմնական կողմերով պահպանվել է մեր քաղաքացիական օրենսդրությամբ:

Հիշյալ դասակարգումը, իհարկե, ուներ նաև գործնական բավական ակտիվ նշանակություն այն առումով, որ սկզբնական եղանակով սեփականության իրավունքի առաջացման դեպքում գործում էր «ոչ ոք չի կարող այլ անձի փոխանցել իրեն պատկանող իրավունքներից ավելի իրավունքներ» կանոնը, իսկ ածանցյալ եղանակի դեպքում այդ կանոնը չէր գործում, այսինքն՝ սեփականության իրավունքն առաջանում էր առանց որևէ սահմանափակումների²:

Ձեռքբերման վաղեմության՝ իբրև տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման հիմքի մասին խոսելիս Գայոսը նշում էր, որ սեփականության իրավունքի ձեռքբերումը վաղեմության հետ կապելը հիմնված է հանրային շահի վրա (bono publico) և նպատակ է հետապնդում թույլ չտալու, որ սեփականության իրավափարաբերություններում տևական ժամանակահատվածի ընթացքում պահպանվեն անորոշությունն ու անվստահությունը³: Հռոմեական իրավունքում շարժական իրերի համար որպես ձեռքբերման վաղեմության ժամկետ սահմանված էր 1 տարին, իսկ անշարժ գույքի համար՝ 2 տարին⁴:

Այս առումով պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիա-

կան օրենսգիրքը իբրև ձեռքբերման վաղեմության ժամկետ սահմանում է 10 տարին: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տիրագուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Ըստ որում, սույն նորմը կիրառելի չէ ինքնակամ կառույց հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ: Քաղաքացիական օրենսգիրքը հստակորեն նախատեսում է, թե որ գույքն է համարվում տիրագուրկ: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով տիրագուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է նրա նկատմամբ սեփականության իրավունքից: Իսկ տիրագուրկ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել միայն օրենսգրքի 179-186-րդ հոդվածի կանոններով: Տիրագուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Ձեռքբերման ինստիտուտի էությունը սահմանված է քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատերը չէ, սակայն այն 10 տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք:

Պետք է նշել, որ այս դրույթը այնքան էլ հաջող ձևակերպված չէ: Ձևակերպումից, ինչպես նշում է Տ.Կ. Բարսեղյանը, կարել է եզրակացնել, որ ձեռքբերման վաղեմությունը կարող է հանդիսանալ ցանկացած, այդ թվում՝ պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման հիմք՝

Անհրաժեշտ է նկատել, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հարցում հատկապես կարևորվում է տիրապետման իրավունքը: Տիրապետման իրավագործությունը՝

որպես սեփականատիրոջ իրավագործությունների եռամիասնականության տարր, գույքն իր տնտեսական իշխանության ներքո, սեփական տնտեսությունում պահելու օրենքի վրա հիմնված հնարավորությունն է:

Խոսելով ձեռքբերման վաղեմության դեպքում անձի տիրապետման իրավունքի բովանդակության հարցի մասին՝ քաղաքացիական իրավունքի հայտնի տեսաբան Յու. Կոչետկովան նշում էր, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտի գործողությունը տարածվում է միայն ուրիշի գույքի փաստացի անտիտղոս տիրապետության վրա, որի պատճառով կիրառելի չէ երկար ժամկետով վարձակալած, տնտեսվարման կամ օպերատիվ կառավարման իրավունքի հանձնված գույքի նկատմամբ: Բայց, միաժամանակ, քաղաքացիական օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրականացման համար պահանջում է նաև գույքը որպես սեփական գույք տիրապետելու պահանջը, այսինքն՝ գույքը տիրապետողը պետք է իրականացնի դրա կառավարումը, հոգ տանի դրա սեփականմամբ, ինչպես կպահպաներ իր սեփական գույքը: Իհարկե կարելի է ենթադրել, որ անձը, որը տիրապետել է որոշակի գույքի աշխատանքային, վարձակալության, անհատույց օգտագործման, հավատարմագրային կառավարման կամ պայմանագրային նմանատիպ այլ հիմունքներով, չի կարող տվյալ ժամանակահատվածում այդ գույքի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության հիմքով, քանի որ պայմանագրի ուժով նա գույքը տիրապետել է ոչ թե որպես սեփական, այլ որպես սեփականության իրավունքով ուրիշին պատկանող գույք: Բայց այնուամենայնիվ կարծում ենք, որ այս նորմի միատեսակ ու միանշանակ ընկալման համար անհրաժեշտ է հավելել դրույթ, համաձայն որի՝ այդ գույքի նկատմամբ անձի ունեցած տիրապետման իրավունքը պետք է հիմնվի այդ գույքի փաստացի անտիտղոս տիրապետության վրա: Վերը հիշատակված օրինակում վարձակալի տիրապետման իրավունքը տիտ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ղոսային տիրապետում է, պաշտպանվում է օրենսգրքով (սեփականատիրոջ կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ տիրապետման իրավունքը կոչվում է տիտղոսային տիրապետում):

Ըստ որում, հարցի նկատմամբ հետաքրքիր նոտեցում է ցուցաբերում ՌԿրահնան: ՌԿրահնայի քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի համաձայն՝ անձը, որը բարեխղճորեն ձեռք է բերել ուրիշի գույքը և շարունակում է բացահայտ և անընդմեջ տիրապետել անշարժ գույքը 10, իսկ շարժական գույքը՝ 5 տարվա ընթացքում, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն), եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե անձը գույքը սկսել է տիրապետել գույքի սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա, և պայմանագրի ժամկետի ավարտից հետո գույքի սեփականատերն այն վերադարձնելու պահանջ չի ներկայացրել, ապա անձն այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով՝ անշարժ գույքի դեպքում հայցային վաղեմության ժամկետի ավարտից 15, իսկ շարժականի դեպքում՝ 5 տարի անց:

Քննարկվող հարցի կապակցությամբ հայտնելով իր դիրքորոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանը իր 21.11.2006թ. ՍԴՈ 667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 6-րդ կետում արձանագրում է, որ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում: Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, որին տիրապետողը տիրում է և օգտագործում մասնավորապես վարձակալության, պահատվու-

յան կամ այլ պայմանագրերի հիման վրա՝ թեկուզև բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք⁷:

Նշենք նաև մեկ այլ կարևոր հանգամանք: Քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասը հստակորեն նախատեսում է նաև, որ տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարող է իր տիրապետման ժամկետին միացնել նաև այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է եղել ինքը: Այսինքն՝ հոդվածի այս մասի իմաստով ձեռքբերման վաղեմության 10 տարվա ժամկետը հաշվարկվում է՝ ներառելով ոչ միայն անձի կողմից անմիջականորեն այդ նույն գույքը տիրապետելու ժամկետը, այլ նաև տվյալ անձի իրավանախորդի կողմից այդ նույն գույքը բարեխղճորեն, բացահայտ և անընդհատ տիրապետելու ժամկետը, եթե այդպիսի իրավանախորդ եղել է:

Այստեղ միանշանակ է, որ օրենսդիրը հարցին ճիշտ կարգավորում է տվել: Հագիվ թե տրամաբանական և հիմնավորված լինել այն իրադրությունը, երբ ձեռքբերման վաղեմության 10 տարվա ժամկետը ընդհատվել այն դեպքում, երբ անձը, որը գույքին՝ որպես սեփական գույք բացահայտ, բարեխղճորեն և անընդմեջ տիրապետել է, ենթադրենք 6 տարի, և մահանալով նրա իրավահաջորդները իրավունք չունենային այդ 6 տարվա ժամկետին հաշվակցել նաև իրենց կողմից այդ գույքը՝ որպես սեփական գույք բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետելու 4 տարվա ժամկետը՝ դրա նկատմամբ ձեռք բերելով սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով:

Հարկ է նշել, որ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է նաև ձեռքբերման վաղեմության ժամկետի ընթացքում անձի տիրապետման իրավունքի պաշտպանության կարևորագույն երաշխիք՝ նշելով, որ մինչև ձեռքբերման վաղեմության ուժով գույքի

նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը գույքը՝ որպես սեփականություն տիրապետող անձն իրավունք ունի պաշտպանել այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատերը չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ չունեն տիրապետման իրավունք: Սա էլ, իհարկե, կարևոր նշանակություն ունի սեփականության իրավունքի եռանիսանականության տարրերից մեկը հանդիսացող տիրապետման իրավունքի պաշտպանության համար:

Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է նաև, թե որ պահից է ծագում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության դեպքում: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռքբերման վաղեմության ուժով գույքը ձեռք բերած անձի մոտ ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից:

Պետք է նշել, որ տարբեր ժամանակներում ձեռքբերման վաղեմության ինստիտուտը էական փոփոխություններ է կրել: Բայց ինչպես արդարացիորեն նշում է Ա.Բ. Բաբաևը, անկախ տարբեր ժամանակներում այս ինստիտուտի հաճախակի փոփոխություններից, բոլոր ժամանակներում այն ուղղված է եղել առաջին հերթին իրավունքում անհստակությունների վերացմանը⁸:

Այդպիսի նշանակություն ունի այն նաև ներկայումս: ՀՀ սահմանադրական դատարանը իր 21.11.2007 թվականի ՍԴՈ-667 թվակիր որոշման պատճառաբանական մասի 5-րդ կետում ըստ էության անդրադառնալով ձեռքբերման վաղեմության ինստիտուտը սահմանող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածին, նշում է, որ ձեռքբերման վաղեմության ինստիտուտը նպատակ ունի իրավաբանական նշանակություն հաղորդելու գոյություն ունեցող փաստացի հարաբերություններին և նպաստելու քաղաքացիական շրջանառության կայունությանը⁹: Նպատակահար-

մար կլիներ անդրադառնալ նաև ՀՀ դատական համակարգի բարձրագույն դատական աստիճանի դիրքորոշմանն այս հարցի շուրջ: Վճռաբեկ դատարանը, իր 23.05.2008թ. 3-367 (ՎԴ) թվակիր որոշման մեջ հայտնելով իր իրավական դիրքորոշումը, նշում է, որ ձեռքբերման վաղեմությունը օրենքով նախատեսված որոշակի ժամկետը լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է¹⁰:

Քաղաքացիական օր-ի 187-րդ հոդվածից կարելի է առանձնացնել ձեռքբերման վաղեմության ինստիտուտի հետևյալ հատկանիշները՝ բարեխղճություն, բացահայտություն, անընդմեջություն: Փորձենք ներկայացնել սրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Բարեխղճություն: Նախ պետք է նշել, Քաղ. օրենսգրքի 187-րդ հոդվածում չի նշվում, թե որ դեպքում է տիրապետումը համարվում բարեխիղճ, չի տալիս բարեխղճության ընդհանուր սահմանումը, չնայած օրենսգրքի 275-րդ հոդվածը սահմանում է բարեխիղճ հասկացությունը բարեխիղճ ձեռքբերման համատեքստում: Այս տեսակետից օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում քննարկելու այս երկու ինստիտուտների հարաբերակցության հարցը, ինչպես նաև այն հանգամանքը, թե արդյոք բարեխղճության տրված հասկացությունը կիրառելի է նաև ձեռքբերման վաղեմության համար, թե այն ունի միայն կոնկրետ ինստիտուտային նշանակություն:

Քաղ. օր-ի 275-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր էլ կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջելու միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՎՐՈՒԹՅՈՒՆ

այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ իրենց կամքից: Այսինքն՝ այն դեպքում, երբ գույքը դուրս է եկել սեփականատիրոջ տիրապետումից իր կամքով, այն բարախիղճ ձեռք բերողից այլևս հետ պահանջվել չի կարող: Այս հարցի շուրջ հետաքրքիր մոտեցում է առաջ քաշում Կ.Ի. Սկլոնսկին՝ նշելով, որ բարախիղճ ձեռքբերողի դեմ վինդիկացիոն հայց ներկայացնելը չնայած հանգեցնում է հատուցմամբ ձեռք բերված իրը վերադարձնելու մերժման, սակայն մինևույն ժամանակ փաստում է, որ սեփականատերը հայցվորն է: Յետևաբար, պատասխանողը, իրը իր մոտ պահելով, այլևս չի կարող իրեն սեփականատեր համարել¹¹: Այլ ուշագրավ տեսակետ է արտահայտում Դ.Ի.Մեյերը՝ նշելով, որ եթե ուրիշի գույքի բարախիղճ տիրապետողը տեղեկացված է սեփականատիրոջ կողմից իր նկատմամբ հարուցված հայցի մասին, ապա նա այդ պահից չի կորցնում իր բարախիղճությունը, չնայած պատասխանատվության առումով հայտնվում է այնպիսի դրության մեջ, որ նման է անբարախիղճ տիրապետողի իրավական դրությանը¹²: Այսպիսով, եթե տիրապետումը սկսել է բարախիղճորեն, հետագա փոփոխությունները չեն կարող հանգեցնել ձեռքբերման վաղեմությունից բխող իրավունքների չիրականացման: Վերջապես, Վ.Ս.Խվոստովը, անդրադառնալով այս հարցին, նշում է, որ «Bona fides»-ի (բարախիղճ ձեռքբերում) առկայությունը պահանջվում է միայն տիրապետման ձեռքբերման պահին: Յետագայում bona fides-ի կորուստը չի վնասում ձեռքբերման վաղեմությանը¹³: Խվոստովի այս տեսակետը նույնպես բավական մեծ տարածում է ստացել քաղաքացիական իրավունքի տեսության մեջ: Ձեռքբերման վաղեմության հիմնախնդրի էությունը ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ մի շարք կարևոր հանգամանքներ: Նախ, ինչպես արդեն նշվել է, քաղ. օր-ը ձեռքբեր-

ման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացում նախատեսում է միայն անշարժ գույքի նկատմամբ: Անշարժ գույքի իրավական ռեժիմի կարևոր բնութագրիչներից է դրա նկատմամբ իրավունքների պետական գրանցումը, որի կենտրոնական սկզբունքներից է հրապարակայնության սկզբունքը: Այսինքն՝ ակնհայտ է, որ հնարավոր չէ, որ անձը հատուցմամբ ձեռք բերի անշարժ գույք դա օտարելու իրավունք չունեցող անձից և չիմանա այդ մասին: Սակայն ձեռքբերման վաղեմության դեպքում ամենևին էլ գույքի օտարման իրավունք չունեցող անձի կողմից դրա ձեռքբերումը չէ: Ակնհայտ է, որ այս առումով բարախիղճության էությունն ու կիրառման ոլորտը այս երկու ինստիտուտների դեպքում չեն համընկնում: Բարախիղճ ձեռքբերման դեպքում համապատասխան գույքը հատուցմամբ ձեռք է բերվում դրա օտարման իրավունք չունեցող անձից, և ձեռքբերողը չզիտեր և չէր էլ կարող իմանալ այդ մասին, և հենց այստեղ է դրա բարախիղճությունը, մինչդեռ ձեռքբերման վաղեմության դեպքում անձն իր գործողություններով է ձեռնամուխ լինում համապատասխան անշարժ գույքը տիրապետելուն և օգտագործելուն: Անձը գիտի, որ գույքն իրենը չէ, սակայն ողջ խնդիրը այն է, որ այդ գույքի սեփականատերը չի առարկում անձի նման գործողությունների դեմ օբյեկտիվ (համապատասխան վայրից տևական բացակայում) կամ սուբյեկտիվ (անտարբերություն) պատճառներով¹⁴: Կարծում ենք՝ ակնհայտ է բարախիղճության տարակիրառությունը քաղաքացիական օրենսգրքի այս երկու ինստիտուտներում:

Այսպիսով, ձեռքբերման վաղեմության դեպքում խոսքը կարող է լինել բացառապես տիրապետման բարախիղճության, այլ ոչ թե ձեռքբերման բարախիղճության մասին: Իսկ ինչպես սահմանված է ՌԴ օրենսդրությամբ, երբ խոսքը վերաբերում է ձեռքբերման վաղեմության ուժով շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացմանը, ապա խոսքը պետք է լինի ձեռքբերման բարախիղճության մասին:

Եվս մի կարևոր հանգամանք: Քաղաքացիական իրավունքի հայտնի մասնագետ Կ.Ի. Սկլովսկին այն մոտեցումն է առաջ քաշում, որ եթե առկա է վինդիկացիայի հնրավորություն, ձեռքբերման վաղեմության ժամկետն սկսվում է վինդիկացիոն հայց ներկայացնելու ժամկետի ավարտից հետո¹⁶: Դժվար է համաձայնել նման տեսակետին: Այս մոտեցման դեպքում պարզ է, որ եթե գույքի սեփականատերը որոշի վինդիկացիոն հայց ներկայացնել դատարան, ապա նա դա կարող է անել միայն հայցային վաղեմության ժամկետի ընթացքում: Վինդիկացիայի դեպքում դրված են բարեխղճության և անբարեխղճության ավանդական հասկացությունները, և նշանակություն չունի անձի կողմից այն տիրապետելու հանգամանքը: Մյուս կողմից, եթե անձը չի դիմում դատարան իր գույքը հետ պահանջելու համար, իսկ բարեխիղճ տիրապետողն էլ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում բոլոր պայմանների առկայությամբ տիրապետում է այդ գույքը, ապա անտրամաբանական կլիներ, եթե այդ գույքը տիրապետելու ժամկետը սկսվեր հայցային վաղեմության ժամկետի ավարտից հետո: Այս դեպքում փաստորեն ստացվում է, որ անձը որոշակի ժամանակահատված, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետը տիրապետել է այդ գույքը, օրենքը դրան նշանակություն չի տալիս անկախ այն հանգամանքից՝ սեփականատերն իր իրավունքից օգտվո՞ւմ է, թե՞ ոչ¹⁶:

Անընդմեջություն. հատկանիշ, որը շատ տեսաբանների կարծիքով տիրապետման բարեխղճությունից ածանցված երևույթ է: Այս հարցի շուրջ առկա է ևս մեկ ընդհանուր պայման. «եթե որևէ մեկը իրը վերադարձնելու պահանջ չի ներկայացնում, ապա համարվում է, որ ձեռքբերման վաղեմությունը չի ընդհատվել»: Ընդ որում, հետաքրքիր է այն հանգամանքը, որ տիրապետողի բարեխիղճ լինելուց դադարելու և վաղեմության ընդհատվելու պահերը սովորաբար համընկնում են. այսինքն՝ բարեխիղճ տիրապետումը միաժամանակ հանդիսանում է նաև անընդմեջ: Կարծում ենք, որ ձեռքբերման վաղեմության դեպքում բարեխղճությունը ունի այլ բովանդակություն, և դրա կորուստը հնարավոր է միայն այն դեպքում, երբ սեփականատերը օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում պահանջում է վերացնել իր իրավունքի խախտումը և իրեն վերադարձնել իր գույքը: Նման պարագայում անընդմեջությունը ենթադրում է, որ համապատասխան ժամկետի ընթացքում գույքը գտնվում է տիրապետողի փաստացի իշխանության ներքո, և դրա պահպանման համար կատարում է անհրաժեշտ բոլոր գործողությունները: Այսինքն՝ բարեխիղճ տիրապետումը միաժամանակ հանդիսանում է նաև անընդմեջ:

Անհրաժեշտ է այստեղ նկատի ունենալ, որ տիրապետումը պետք է լինի անընդմեջ ձեռքբերման վաղեմության ողջ ժամկետի ընթացքում: Գործող օրենսդրության մեջ կա բաց նաև այս առումով: Նպատակահարմար կլիներ սահմանել, թե որ տիրապետումն է համարվում անընդմեջ: Անհրաժեշտ է սահմանել նաև, որ եթե իրը դուրս է եկել անձի տիրապետությունից, ապա ժամկետը չի ընդհատվում, եթե տվյալ անձը մեկ տարվա ընթացքում պահանջել է այդ գույքը: Հակառակ դեպքում ստացվում է, որ տիրապետողը պարտավոր է ամեն օր ապացուցել ժամկետի անընդմեջությունը:

Բացահայտություն: Այս հատկանիշի առկայության համար բավարար է, որ փաստացի տիրապետողը չթաքցնի այն, որպեսզի գույքը տեսնելու հնարավորությունը առկա լինի երրորդ անձանց համար¹⁷: Իրականում այս բնորոշումն ունի շատ ընդհանուր նշանակություն: Բացահայտության հատկանիշը օրգանապես կախված է իրի հատկանիշներից և կոնկրետ հանգամանքներից: Դիցուք, ի տարբերություն շատ այլ երկրների օրենսդրության՝ ՀՀ օրենսդրությունը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացում նախատեսում է բացառապես անշարժ գույքի նկատմամբ: Բնականաբար, այս հանգամանքը պայմանավորում է ձեռքբերման վաղեմության դրսևորման ածանձնահատկությունները անշարժ գույքի նկատմամբ (մասնավորապես, բնակելի

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

տան դեպքում սահմանված անհրաժեշտ ժամկետի ընթացքում՝ 10 տարի) ապրել այդ տանը, կատարել անհրաժեշտ վճարումներ և այլն¹⁸:

Քննարկենք նաև ձեռքբերման վաղեմության հետ կապված ևս մի կարևոր հանգամանք: ՈՒսուճանասիրման կարիք ունի նաև այն հարցը, թե ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է առաջանալ միայն տիրազուրկ գույքի, թե նաև այն գույքի նկատմամբ, որն ունի սեփականատեր: ԴՅ պաղ. օր-ի 178-րդ հոդվածը սահմանում է տիրազուրկ գույքի հասկացությունը: Այսպես, տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է սեփականության իրավունքից: Դարձյալ անդրադառնանք ԴՅ բարձրագույն դատական ատյանի դիրքորոշմանն այս հարցի շուրջ: ԴՅ վճռաբեկ դատարանը, իր 27.03.2008թ. 3-153)ՎԴ), 31.10.2008թ. ԵԿԴ (0590)02)08) թվակիր որոշումներում միմյանց հետ համադրելով ԴՅ պաղ. օր-ի 187-րդ, 172-րդ (սեփականության իրավունքի ծագման հիմքերը), 178-րդ (տիրազուրկ գույք) և 280-րդ (սեփականության իրավունքից հրաժարվելը) հոդվածները, ամրագրել է, որ ձեռքբերման վաղեմության ուժով անձի սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել այն գույքի նկատմամբ, որը տիրազուրկ է, կամ որը տիրազուրկ չէ, բայց դրա սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտարբեր վերաբերմունք է ցուցաբերել դրա նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, վճռաբեկ դատարանը այս հարցում պահանջում է գույքի սեփականատիրոջ՝ գույքի նկատմամբ անտարբեր վերաբերմունք ցուցաբերելու կոնկրետ գործողություններ: Սակայն խնդիրն այն է, որ ԴՅ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում տիրազուրկ անշարժ գույքը պետական կամ համայնքային սեփականություն դարձնելու հնարավորություն ձեռքբերման վաղեմության ուժով: Անհրաժեշտ է նկա-

տել, որ այս տեսակետը, մեղմ ասած, այդքան էլ արդարացված չէ: Ինչպես նկատում է Տ.Կ. Բարսեղյանը, անշարժ գույքը, եթե հողատարածք չէ, ապա անպայմանորեն կապված է հողամասի հետ: Հետևաբար, եթե չկա քաղաքացի կամ իրավաբանական անձ, որը տիրապետում է այդ հողատարածքը, այն կարող է մնալ տիրազուրկ, անօգտագործելի՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով¹⁹:

Օրենսդրական կարգավորման հաջորդ բացը պետք է տեսնել հենց սրանում: Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրությունը և դրա հիման վրա ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ԴՅ օրենքը համապատասխանաբար 104.1 և 4-րդ հոդվածներով իրավաբանական անձ է հռչակում նաև համայնքը: Եվ եթե հիմք ենք ընդունում վերոհիշյալ իրավական ակտերում ամրագրվածը, փաստորեն ստացվում է այնպես, որ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված նորմի «Իրավաբանական անձ» հասկացության մեջ պետք է ընդգրկել նաև համայնքը: Սակայն ողջ խնդիրն այն է, որ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում, թե ինչ կառուցակարգով է իրականացվելու տիրազուրկ անշարժ գույքը համայնքային սեփականություն դարձնելու արարողակարգը:

Քննարկվող հիմնահարցի հետ սերտորեն կապված է տիրազուրկ անշարժ գույքի հաշվառման խնդիրը: Այն ԴՅ-ում կարգավորվում է ԴՅ կառավարության «Ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ զբաղեցված հողամասերը, տիրազուրկ (լքված) անշարժ գույքը հաշվառելու մասին» 2000թ. հուլիսի 27- թիվ 422 որոշմամբ, որի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ԴՅ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառման է ենթակա նաև տիրազուրկ (լքված), սեփականատեր չունեցող կամ այն անշարժ գույքը, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն կարգի 3-րդ մասի 19-րդ կետը, մանրամասնելով հաշվառման մեխա-

նիզմը, անրագրում է, որ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումը տիրազուրկ (լքյալ) անշարժ գույքի մասին տեղեկատվության առկայության դեպքում այն հաշվառման համապատասխան մատյանում գրանցելուց հետո 5-օրյա ժամկետում հայտնում է տվյալ տարածքի համայնքի ղեկավարին (Երևանի քաղաքապետին և նարգպետին) համայնքի սահմաններից դուրս գտնվող հողերի վրա կառուցված շենքերի, շինությունների մասով:

Փաստորեն ստացվում է այնպես, որ կառավարության որոշմամբ նախատեսվում է միայն տիրազուրկ անշարժ գույքի հաշվառման մեխանիզմը՝ չնախատեսելով այդպիսին պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու հնարավորություն: Սա բնական է, քանի որ կառավարության որոշումը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է, իսկ օրենսգիրքը նման հնարավորություն չի նախատեսում:

Խնդրո առարկայի մասին առավել համալիր պատկերացում կազմելու համար անդրադառնանք այն հարցին, թե ինչպես է կարգավորված հարցը ՌԴ օրենսդրությամբ: ՌԴ քաղաքացիական օր-ի 225-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տիրազուրկ անշարժ գույքը հաշվառվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից այն տեղական ինքնակառավարման մարմնի հայտարարության հիման վրա, որի տարածքում գտնվում է համապատասխան անշարժ գույքը: Հաշվառման օրից մեկ օր հետո համանքային սեփականության կառավարման լիազորություն ունեցող մարմինը իրավունք ունի դիմելու դատարան տվյալ գույքի նկատմամբ համանքային սեփականության իրավունքի ճանաչման պահանջով: Ըստ որում, եթե դատարանը չի ճանաչում համանքային սեփականությունը այդ գույքի նկատմամբ, այն կարող է վերադարձվել նախկին սեփականատիրոջը կամ ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով: Ակնհայտ է, որ ՌԴ օրենսդրությունը ավելի ճիշտ կար-

գավորում է տվել հարցին՝ նախատեսելով անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության առաջացման հստակ մեխանիզմ:

Հետևապես կարծում եմ, որ այս առումով նպատակահարմար կլիներ լրացնել նաև օրենսդրական կարգավորման նաև այդ բացը՝ հստակորեն նախատեսելով տիրազուրկ անշարժ գույքը պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու հնարավորություն՝ սահմանելով պետական կամ համայնքային սեփականությունն դարձնելու ժամկետի չափը, դրա ընթացակարգային կառուցակարգի հետ կապված այլ կարևոր առանձնահատկությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ՝ նպատակահարմար կլիներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 178-րդ հոդվածը լրացնել դրույթով, որը համայնքի ղեկավարին հնարավորություն կընձեռեր տիրազուրկ անշարժ գույքի հաշվառումից հետո դիմել դատարան դրա նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով: Եթե դատարանը մերժեր, այն կարող էր ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով կամ վերադարձվեր նախկին սեփականատիրոջը: Սրանով մենք կկանխենք գույքի՝ տիրազուրկ կարգավիճակում հարատևորեն մնալու երևույթ՝ այդտեղից բխող բոլոր հանգամանքներով: Նման դեպքում մենք այս կարևորագույն ինստիտուտի հետ կապված հարցերը նույնպես կդնենք պատշաճ իրավական հիմքերի վրա: Ինչևիցե, հուսանք, որ օրենսդիրը մոտ ապագայում ուշադրություն կդարձնի նաև այս կարևոր հարցին:

Եվ վերջում ձեռքբերման վաղեմության ինստիտուտը կազմող հարցերի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար ճիշտ կլիներ անդրադառնալ նաև գույքի տիրազուրկ ճանաչման դատավարական առանձնահատկություններին: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 187-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գույքը տիրազուրկ ճանաչելու վերաբերյալ քաղաքացու կամ իրավաբանական անձի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

դիմումում պետք է նշվի, թե որ գույքն է տիրազուրկ ճանաչվելու, նկարագրվեն դրա հիմնական տարբերակիչ հատկանիշները, ինչպես նաև բերվեն ապացույցներ, որոնք հաստատում են սեփականատիրոջ կողմից առանց գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության գույքը թողնելու փաստը և ապացույցներ գույքը դիմողի տիրապետմանն անցնելու մասին: Իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, գտնելով, որ գույքը սեփականատեր չունի կամ այն դրա սեփականատիրոջ կողմից թողնվել է առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության, վճիռ է կայացնում գույքը տիրազուրկ ճանաչելու և տիրապետող անձի սեփակա-

նությունը դարձնելու մասին: Այսինքն՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքը, ինչպես տեսնում ենք, իբրև գույքի տիրազուրկ ճանաչման հիմք համարում է ոչ միայն օբյեկտիվ (երբ գույքը սեփականատեր չունի) պատճառը, այլ նաև սուբյեկտիվ (սեփականատիրոջ կողմից առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության թողնելու) հանգամանքը: Փաստորեն գույքի տիրազուրկ ճանաչման և տիրապետող անձի սեփականությունը դարձնելու մասին որոշումը ամրագրվում է մեկ միասնական վճռահատությամբ:

Այսպիսով, ձեռքբերման վաղեմության՝ իբրև սեփականության իրավունքի առաջացման հիմքը կարգավորող օրենսդրական դրույթները պետք է հստակեցվեն: Եվ միայն այդ դեպքում օրենսդիրը քաղաքացիաիրավական այս ինստիտուտի կարգավորումը կդնի պատշաճ իրավական հենքի վրա:

¹ Տե՛ս Римское частное право. Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Петерского. М., 1999, էջ 92:

² Տե՛ս Լև Բաբայան, «Ջոռմեական մասնավոր իրավունք», Երևան, 2000, էջ 80:

³ Տե՛ս D.41.3.1:

⁴ Տե՛ս Լև Բաբայան, նշված աշխատությունը, էջ 80:

⁵ Տե՛ս Տ. Բարսեղյան, «ՀՀ քաղաքացիական իրավունք» Առաջին մաս, 2009, Երևան, էջ 285:

⁶ Տե՛ս Кочеткова Ю.А. Соотношение вещно правовых и обязательно-правовых способов защиты права собственности //Актуальные проблемы гражданского права, Вып второй. М., 2000, էջ 38:

⁷ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 2/43/2007թ.:

⁸ Տե՛ս Бабаев А.Б. Система вещных прав. Монография: М.: Волтерс Клувер, 2006, էջ 218:

⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 2/43/2007:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի որոշումներ, ՀՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 38/628/, 18.06.2008թ.:

¹¹ Տե՛ս Скловский К.И.Собственность в гражданском праве. М., Дело, 2002, էջ 262:

¹² Տե՛ս Мейер Д.И.Русское гражданское право. Ч.1, էջ 268:

¹³ Տե՛ս Хвостов В.М.Система римского права, էջ 122:

¹⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ա.Ա., «Անշարժ գույքը՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների օբյեկտ», ատենախոսություն, ԵՊՀ, Երևան, 2009, էջ 115:

¹⁵ Տե՛ս Скловский, К.И. Собственность в гражданском праве: М., Дело, 2002, էջ 263:

¹⁶ Տե՛ս Ա.Ա.Հովհաննիսյանի նշվ. աշխ., էջ 117:

¹⁷ Տե՛ս Гражданское право: Учебник. Часть 1. Под. ред. А.П.Сергеева и Ю.К.Толстого. М., 1997, էջ 344:

¹⁸ Տե՛ս Ա.Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 218:

¹⁹ Տե՛ս Տ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 292:

THE PROBLEMS OF THE OLDNESS POSSESSION

Tigran KHACHIKYAN

YSU, Faculty of Law, 3rd course student

In his article Tigran Khachikyan provides a detailed analysis of the concept of acquisitive prescription, which has always been in the centre of legal disputes. The author addresses the regulation of this institute in other countries while making suggestions for implementation. The state and the community cannot gain ownership on the grounds of acquisitive prescription. This is a serious drawback. It is hard to under-

stand why all participants of civil relations can, while the state and the community cannot.

Civil Code determines the period for acquisitive prescription /10 years/. In Ukraine, for example, acquisitive prescription applies also to movable estate /5 years/. Unfortunately, however in Armenia there is no such rule. Of course the decisions of the Supreme Court and the Constitutional Court partly clarify the issue, but there are still many problems within this field. This work is dedicated to their discussion.